

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐՂԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ**

2019 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Հ.Հովեյան

Հաստատվել է՝ Վարդենիկ համայնքի ավագանու 26.01.2019թ. N 6 որոշմամբ

Վարդենիկ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
3. ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ
 - 3.1 Համայնքի աշխարհագրական դիրք, կլիմա
4. ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
5. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ
7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
 - 7.1 Գյուղատնտեսություն
 - 7.2 Անասնաբուծություն
 - 7.3 Բնապահպանություն
8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ/ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
 - 8.1 Ճանապարհաշինություն
 - 8.2 Զրամատակարարում և ջրահեռացում
9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
10. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀԶԾ- Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

ՏԱՊ- Տարեկան աշխատանքային պլան

ՏԻՄ- Տեղական ինքնակառավարման մարմին

ՓՄԶ- Փոքր և միջին ձեռնակություններ

ՀԿ-Հասարակական կազմակերպություն

ՀԿՏՀ- Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգ

ՈՒՎԿ- Ունիվերսալ վարկային կազմակերպություն

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքապետարանները, որպես ժողովրդավար կառույցներ, հաշվետու են տեղի բնակչությանը իրենց որդեգրած զարգացման ռազմավարական պլանի համար: Ուստի, այդ պլանը պետք է լինի առավելագույնս պարզ, հասանելի և իր մեջ պարունակի արդյունքներին հասնելու տեսանելի ուղիներ՝ միաժամանակ համապատասխանելով տեղի բնակչության կարիքներին և սպասումներին: Համայնքապետարանները կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրեր (ՀՀԶԾ): Սակայն հաճախ նպատակներին հասնելու ճանապարհին ի հայտ եկած այլ կարիքներն ու անհրաժեշտությունները խոչընդոտ են հանդիսանում համայնքի համար: Որպեսզի նման խոչընդոտները չարգելեն համայնքի զարգացմանը, համայնքները մշակում են տարեկան աշխատանքային պլան (ՏԱՊ): ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է. այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:

3.ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1 Համայնքի աշխարհագրական դիրք, կլիմա

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքը վերաբնակեցվել է 1828 թ-ին: Համայնքը ավելի հին է քան ենթադրվում է, որի մասին փաստում են պահպանված հուշարձանները: Նախկինում կոչվել է Գյոզալդարա, որը թարգմանաբար նշանակում է Գեղեցկաձոր: Վարդենիկը սփռված է կապուտայա Սևանա լճի հարավային ափին՝ հարակից հարթավայրում: Բնակավայրի բացարձակ բարձրությունը տատանվում է 1920-2050 մ-ի՝ սահմաններում: Համայնքի տարածքի ռելիեֆը կտրտված է , տեղ-տեղ հարթ թույլ թեքությամբ և բաժանված է ձորակով երկու մասի: Տարածքը բնութագրվում է զով ամառներով և ցուրտ ձմեռներով: Ջերմաստիճանի բացարձակ նավագագույնը դիտվում է հունվար-փետրվար ամիսներին, իսկ բացարձակ առավելագույնը հուլիս-օգոստոս ամիսներին: Վարդենիկ համայնքի վարչական տարածքը կազմում է 13.350 հա, բնակչության թիվը՝ 8400 մարդ, տնտեսությունների թիվը՝ 3100:

Համայնքը ընդգրկված է «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիայում»: Բնակչության հիմնական մասը զբաղվում է բուսաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղն ունի կանոնավոր հատակագծային կառուցվածք, որտեղ բնակավայրի տարածքը զբաղեցնում է 706.17 հա: Վարդենիկ համայնքը գտնվում է մարզկենտրոնից 40կմ, իսկ Երևան քաղաքից՝ 142 կմ հեռավորության վրա: Վարդենիկ համայնքում գործում է մեկ ավագ դպրոց, 2 հիմնական դպրոց, 1 երաժշտական դպրոց, մանկապարտեզ, նախակրթարան, վերանորոգման փուլում գտնվող մշակույթի տուն, որտեղ ներկա պահին գործում են սպորտային և պարի խմբակներ: Համայնքը համագործակցում է «Վիքիմեդիա Հայաստան» կրթական ծրագրի հետ:

4. ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Վարդենիկ համայնքի տարեկան աշխատանքային պլանը կազմված է Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հիման վրա: Այն հնարավոր կլինի իրականացնել միայն հետևողական և պարտաճանաչ աշխատանքների շնորհիվ: ՏԱՊ իրագործման համար 2019 թվականի պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատվել են հետևյալ կերպ.

Պահանջվող ընդհանուր գումարը կազմում է 226783.0 հազար դրամ:

ՀՀ պետական բյուջեից հատկացումներ՝ 180395 հազար դրամ

Համայնքային բյուջե՝ 43354.1 հազար դրամ

2019 թվականի Վարդենիկ համայնքի ՏԱՊ-ով պահանջվող ընդհանուր գումարը բաշխվել է հետևյալ կերպ.

Հիմնական ծախսատեսակները	Տարվա պլան
Վարդենիկի համայնքապետարանի ապարատի պահպանում	49360
Վարդենիկի համայնքապետարան ընդհանուր բնույթի այլ ծառայություն	8893
Վարդենիկի համայնքապետարան գյուղատնտեսություն	12100
Վարդենիկի համայնքապետարան կեղտաջրերի հեռացում	500
Պաշտպանություն	700
Գյուղատնտեսության աջակցություն	12100
Վարդենիկի համայնքապետարան ոռոգման համակարգ	10000
Վարդենիկի համայնքապետարան ճանապարհային տրանսպորտ	15900
Վարդենիկի համայնքապետարան նախադպրոցական կրթություն	24000
Վարդենիկի համայնքապետարան ոռոգման համակարգ	10000
Ճանապարհ և տրանսպորտ	15900
Վարդենիկի աղբահանություն	4200
Կեղտաջրեր հեռացում	500
Վարդենիկի համայնքապետարան փողոցային լուսավորում	20200
Վարդենիկի համայնքապետարան պահուստային ֆոնդ	28327
Գետի հունի մաքրում	3000
Կանաչ տարածքների պահպանում	3754
Վարդենիկի համայնքապետարան ջրամատակարարման համակարգ	3848
Փողոցների լուսավորում	20200
Սպորտային միջոցառումների կազմակերպում	951
Մշակութային միջոցառումների կազմակերպում	6800
Հուշարձանների և մշակութային արժեքների պահպանում	1250
Վարդենիկի համայնքապետարան նախադպրոցական կրթություն	24000
Երաժշտական դպրոց	20000
Սոցիալակն աջակցություն	5000
Պահուստային ֆոնդ	36327

Վարդենիկ համայնքում 2019 թվականին բացի բյուջետային միջոցներով նախատեսված ծախսերից, նախատեսվում է նաև ներդրումներ՝

- . Մասնավոր հատվածի ներդրումներ
- . Միջազգային կազմակերպություններ և հիմնադրամներ
- . Ֆինանսավորման այլ աղբյուրներ

Քանի որ հստակեցված չեն ներդրումների չափերը, այդ իսկ պատճառով ՏԱՊ-ում այն ներառված չեն:

5. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ), ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը համայնքում նպաստում է աշխատատեղերի ավելացմանը, աղքատության կրճատմանը և տնտեսության զարգացմանը:

Համայնքի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, համայնքի համագործակցությունը փոքր և միջին ձեռնարկությունների հետ: Համայնքի գերակա խնդիրներից է՝ խթանել գյուղմթերքի արտադրությունը և իրացման համար նոր շուկաների հայթայթումը:

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Վարդենիկ համայնքում գործում է 1 ավագ դպրոց, 2 հիմնական դպրոց, երաժշտական դպրոց, մանկապարտեզ, նախակրթարան, վիքիմեդիա կրթական ծրագիր, մշակույթի տուն որտեղ գործում են տարբեր երաժշտական և սպորտային խմբակներ: Համայնքում ուշադրության կենտրոնում է ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության կառավարման կատարելագործումը: 2019 թ.-ին ՏԱՊ-ով նախատեսվում է վերանորոգել երաժշտական դպրոցը:

- Խաղահրապարակներում ստեղծել հարմարավետ պայմաններ
- Երաժշտական դպրոցի վերանորոգման համար նախատեսված է 8մլն.դրամ:

Խաղահրապարակների համար նախատեսված է 4մլն. դրամ:

Ոլորտը	Համայնքի բյուջե	մլն.դրամ
Երաժշտական դպրոց		8
Խաղահրապարակների		4

Սոցիալական պաշտպանություն

Վարդենիկ համայնքի բնակչության թիվը կազմում է 8400 մարդ: Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը կկազմի շուրջ 10 տոկոս: 2019 թ.-ին Վարդենիկ համայնքում ծրագրվում է սոցիալապես

անապահով խավի կենսամակարդակի բարելավման համար համայնքի բյուջեից հատկացնել շուրջ 4 մլն դրամ:

Ոլորտը	Համայնքի բյուջե	մլն դրամ
Սոցիալական աջակցություն		4

ՏԱՊ-ում տեղ գտած գործողությունների պլանը հետևյալն է.

- Համայնքում սոցիալական պլանների կազմում և իրականացում:
- Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական աջակցություն տրամադրելու:

2019 թ.-ին սոցիալական ծառայությունների որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագիրը, բարելավել կարիքավոր ընտանիքներին, միայնակ տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը:

7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Գյուղատնտեսություն

Համայնքի տնտեսության մեջ գյուղատնտեսական ոլորտը զգալի տեղ է զբաղեցնում: Գյուղատնտեսության զարգացումը, արտադրողականության բարձրացումը ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար պետք է ունենալ գյուղատնտեսական հեռանկարներ, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև այլ ներդրողների և ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Վարդենիկ համայնքում գյուղատնտեսության ոլորտի առաջնային թիրախներից են.

1. Սառնարանային տնտեսությունների հիմնում
2. Պտղատու այգիների հիմնում

3. Անմշակ վարելահողերի շրջանառության մեջ ներգրավում
4. Անասնապահության զարգացում
5. Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում
6. Բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում
7. Վայրի բույսերի վերամշակում և գյուղական տուրիզմի զարգացում

2019 թվականին համայնքում նախատեսվում է կառուցել սառնարանային տնտեսություն, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում: Համայնքում ընթացքի մեջ է ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքները: Վարդենիկ համայնքում 2019 թվականին նախատեսված ոռոգման համակարգի պահանջվող ներդրումը կկազմի 7մլն. դրամ սեփական միջոցներ 3մլն. դրամ:

Ոլորտը	Համայնքի բյուջե	մլն.դրամ
Ոռոգման համակարգ		3

7.2 Անասնաբուծություն

Վարդենիկ համայնքում անասնապահության զարգացման համար, Վարդենիկ արոտ օգտագործողների սպառողական կոոպերատիվի կողմից կառուցվել են խմոցներ և անասնապահական փարախներ համայնքի տարբեր հանդամասերում: Շարունակվում է նաև համագործակցությունը Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի, ինչպես նաև գյուղատնտեսական վարկավորում իրականացնող կազմակերպությունների հետ:

7.3 Բնապահպանություն

Վարդենիկ համայնքը մշտապես մասնակցություն է ունեցել «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումներին: Բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով 2019 թ-ին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Վարդենիկ համայնքում իրականացնել ծառատունկ և նմանատիպ այլ կանաչապատման աշխատանքներ:
2. Աղբահանության ինտենսիվ կազմակերպում

3. Վարդենիս գետի հունի մաքրման աշխատանքներ
4. Վարդենիկ համայնքում կոյուղագծի վերանորոգման աշխատանքներ
5. Վարդենիկ համայնքում խիստ անհրաժեշտ է կոյուղու գտման կայանի /սեպտիկա/ կառուցման աշխատանքներ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ/ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

8.1 Ճանապարհաշինություն

Վարդենիկ համայնքում 2019 թ-ին նախատեսվում է համայնքի երկրորդական ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ 50000 հազար ՀՀ դրամ: Ինչպես նաև նախատեսվում է Վարդենիկ համայնքի հանդամիջյան ավտոճանապարհների բարեկարգման աշխատանքներ: Նախատեսվում է ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

8.2 Ջրամատակարարում և ջրահեռացում

Խմելու ջուրը ռազմավարական կարևորագույն ռեսուրս է: Վարդենիկ համայնքում ջրամատակարարումը իրականացվում է համայնքի կողմից: Վարդենիկ համայնքը խմելու ջուր ստանում է բնական աղբյուրներից և ինքնահոս եղանակով, 25 կմ հեռավորությունից 200 տրամաչափի խողովակով հասնում է համայնք: Համայնքի ազգաբնակչության 30 տոկոսն ունի շուրջօրյա ջրամատակարարում, իսկ մնացած մասը՝ գրաֆիկով: Նախատեսվում է նոր ջրագծերի կառուցում, համայնքի մնացած բնակչությանը շուրջօրյա ջրամատակարարումով ապահովելու համար: Նախատեսվում է համայնքի բյուջեի միջոցներով կառուցել խմելու ջրի գլխամասային կապտածներ և նոր ջրագծեր, որի համար կպահանջվի մոտ 100 մլն ՀՀ դրամ:

1. Վարդենիկ համայնքի բյուջեի միջոցներով նախատեսվում է իրականացնել հազ.ՀՀ դրամ ծավալի աշխատանքներ՝

- Ճանապարհների բարեկարգում՝ 3 մլն.դրամ
- Փողոցների արտաքին լուսավորության տարածում 5 մլն. դրամ
- Երաժշտական դպրոցի վերանորոգում 12 մլն. դրամ

ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ սուբվենցիա հատկացվող գումարները կուղղորդվեն նշված աշխատանքների համաֆինասավորմանը:

9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման նպատակն է բարելավել պետական կառավարումը համայնքում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել համայնքապետարանի տեղեկատվական և կառուցվածքային կառավարչական համակարգերի կատարելագործումը, հաշվի առնել բնակավայրերի կարիքները և նրանց տրամադրել անհրաժեշտ մեթոդական օգնություն: Համայնքապետարանի գործունեության թափանցիկության համար օգտագործել համայնքի կառավարման տեղեկատվական համակարգի /ՀԿՏ/ հնարավորությունները: Ստեղծել հարթակ, որը հնարավորություն կընձեռնի համայնքապետարանի աշխատանքների լուսաբանման ուղղությամբ: 2019 թ-ի ՏԱՊ-ի կարևորագույն խնդիրներից է տեղական եկամուտների հավաքագրումների ապահովումը: Համայնքային ծառայության համակարգը ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել համայնքային ծառայողների վերապատրաստումներ ՏԻՄ-երի կողմից: 2019 թ.-ին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել համայնքի բյուջեի կազմման, բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների հաստատման հրապարակայնության գործընթացի վրա:

Համայնքապետարանի պաշտոնական էջի միջոցով պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել՝ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի և համայնքային ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների գործունեության վերաբերյալ:

10. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Վարդենիկ համայնքը համագործակցում է համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման համար՝ արտերկրի գործարարների հետ, ինչպես նաև ԻՖատի, Վիքիմեդիա Հայաստանի: Ինչպես նաև պատրաստակամ է համագործակցել այլ միջազգային կազմակերպությունների հետ համայնքի հեռանկարային զարգացման նպատակով: Համայնքը համագործակցում է «Վարդենիկ»

հիմնադրամի հետ, որտեղից ամեն տարի համայնքի զարգացման և բարեկարգման համար կտրամադրվի 10.մլն դրամ գումար:

ԳԵՂԱՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՎԱՐԴԵՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Վարդենիկ համայնքը հարուստ է բազմաթիվ խաչքարերով, տեսարժան վայրերով, տարբեր ուխտատեղիներով: Իշխանավանքի ձորում գտնվող այգին ծառայում է որպես հանգստյան գոտի, որտեղ գտնվում է «Քարե ամրոց» բնության հուշարձանը: Քարե ամրոցի շուրջ հյուսված են լեզենդներ՝ իբր ամրոցը եղել է աթարից շարված, իսկ տերը՝ մեծահարուստ կալվածատեր: Մեծահարուստ քրոջն այցելում է աղքատ քույրը աթար ուզելու, սակայն քույրը մերժում է: Այդ պահին աղքատ քույրը անիծում է, ասելով. «Քա՛ր դառնա քո ունեցվածը» և աթարի ամրոցը վերածվում է քարի:

Վարդենիկ համայնքում բարերար ընտանիքների կողմից վերակառուցվել են Սուրբ Հրեշտակապետաց» եկեղեցին, 11-րդ դարում կառուցված Իշխանավանքը, Շեկ Ավետարան եկեղեցին: Ինչպես նաև մի շարք մատուռներ են վերականգնվել: